Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 4-ի N 1277 - Ն որոշման

«Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թ.
մարտի 13-ի N 173 որոշմամբ

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԸ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| NN ը/կ | Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները | Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները տնօրինելու լիազորություններով օժտված պետական մարմինները |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | I. Ռազմական բնագավառի տեղեկությունները | |
| 1. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի կիրառման ծրագրերը, օպերատիվ ծրագրերը, մարտական կառավարման փաստաթղթերը, տարբեր աստիճանի մարտական պատրաստականության բերելու վերաբերյալ փաստաթղթերը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 2. | Զինված ուժերի ռազմավարական ծավալման մասին տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 3. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զարգացման թվի, մարտական կազմի կամ քանակի, նրանց մարտական պատրաստականության, ինչպես նաև ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության մասին տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 4. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստականության օպերատիվ (մարտական) վիճակը, նրանց գործունեության ապահովվածությունը, կազմը և զորքերի կառավարման համակարգի վիճակը բացահայտող տեղեկությունները | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 5. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորահավաքի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռեսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնա-րավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական, ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրումներով ապահովելուն վերաբերող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 6. | Սպառազինության և ռազմական տեխնիկայի երկարաժամկետ կանխատեսումների ուղղությունները կամ զարգացման ծրագրերը, սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշներ ստեղծելու կամ կատարելագործելու նպատակային ծրագրերի, գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտո-րական աշխատանքների բովանդակությունը կամ արտադրանքը, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 7. | Սպառազինության և ռազմական տեխնիկան մշակելու, կառույցների, տեխնոլոգիայի, պատրաստման, միջուկային նյութերի և 1-ին ու 2-րդ դասի ռադիոակտիվ նյութերի գտնվելու վայրը, կիրառման կամ շահագործման ուղղությունները բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 8. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, զինվածությունը, թիվը բացահայտող տեղեկությունները, որոնք Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ենթակա չեն բաց հրապարակման | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 9. | Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը և անվտանգությունն ապահովելու նպատակով նրա ենթակառուցվածքն օգտագործելու վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 10. | Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ապահովմանն ուղղված հեռահաղորդակցության համակարգին և ցանցերին վերաբերող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 11. | Զինված ուժերը, այլ զորքերը և քաղաքացիական պաշտպանության | ՀՀ պաշտպանության |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | ուժերը բոլոր տեսակի կապերով (ռադիոլոկացիոն, ռադիոտեխնի-կական) ապահովման կազմակերպումը կամ գործելը բացա-հայտող տեղեկությունները | նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 12. | Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի էությունը՝ կառուցվածքը, խնդիրները և այլն, կազմակերպումը կամ գործունեության հիմնական ձևերի արդյունքները, պետական սահմանի պաշտպանության կառուցվածքը բացահայտող տեղեկությունները | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն |
| II. Արտաքին հարաբերությունների բնագավառի տեղեկությունները | | |
| 13. | Արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի, գիտա-տեխնիկական կապերի վերաբերյալ Հայաստանի Հանրա-պետության արտաքին քաղաքականության ռազմավարությունը և մարտավարությունը բացահայտող տեղեկությունները, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել պետության շահերին | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| 14. | Ռազմական դրության ժամանակ օտարերկրյա պետություն-ների հետ համագործակցության ուղղությունները կամ տնտեսական ծավալը, ինչպես նաև այդ հարցերով Հավա-քական անվտանգության պայմանագրի կազմակերպության և Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների արտաքին տնտեսական կազմակերպու-թյունների ռազմազորահավաքային փոխներգործությունը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| III. Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները | | |
| 15. | Պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության տնտեսության կայուն գործունեության նախապատրաստումը բացահայտող ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն |
| 16. | Գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով տնտեսության տարբեր բնագավառների տեխնոլոգիական գործընթացներում, ինչպես նաև սպառազինության և ռազմական տեխնիկայի հնարավորությունների որակական նոր մակարդակը սահմանող, դրանց մարտական արդյունավետության բարձրացման մասին տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել պետության շահերին | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 17. | Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով անցկացվող գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների բովանդակությունը | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | և ուղղվածությունը բացահայտող տեղեկությունները | պաշարների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 18. | Հիդրոօդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների, ինչպես նաև պետության անվտանգության նկատառումներով անցկացվող հատուկ երկրաբանագեոֆիզիկական հետազոտությունների արդյունքները բացահայտող տեղեկությունները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 19. | Պետական պաշտպանական պատվերների, սպառազինության և ռազմական տեխնիկայի մատակարարումների ծավալները, դրանց թողարկման արտադրական կարողությունների ծրագրերը (առաջադրանքները) բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 20. | Սպառազինության և ռազմական տեխնիկայի ստեղծմանը վերաբերող և հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական աշխատանքների հետ կապված ծախսերը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 21. | Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>զորահավաքային առաջադրանքներ ունեցող հանրապետական գործադիր մարմիններ<br>ՀՀ մարզպետարաններ |
| 22. | Ռազմական փոխադրումների ծավալները և սպառազինության ու ռազմական տեխնիկայի փոխադրման երթուղիները, տրանսպորտային միջոցների վիճակը, սարքավորումները, ռազմական նպատակի համար տրանսպորտային ցանցերի նախապատրաստումը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 23. | Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը, այդ թվում տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 24. | Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների վիճակը բացահայտող տեղեկությունները՝ հանրապետության մասշտաբով | քաղաքացիական պաշտպանության ուժեր ունեցող հանրապետական գործադիր մարմիններ<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ |
| 25. | Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուց-վածքային կազմակերպումը կամ զորահավաքային ծրագրերի ցուցանիշները, ինչպես նաև գործադիր մարմինների կամ առանձին կազմակերպությունների զորահավաքային պատրաստության վիճակը բացահայտող տեղեկությունները | զորահավաքային առաջադրանքներ ունեցող հանրապետական գործադիր մարմիններ<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ |
| 26. | Պետական և զորահավաքային ռեզերվների տեղաբաշխումը, փաստացի պաշարները, դրանց օգտագործումը բացահայտող տեղեկությունները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 27. | Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զորահավաքային նախապատրաստության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների ծրագրերը, բովանդակությունը կամ արդյունքները բացահայտող տեղեկությունները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 28. | Ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական օբյեկտների տեխնիկական, ինչպես նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի խմելու և կենցաղային ջրամատակարարման համար օգտագործվող ջրաղբյուրների (հորատանցք, բնաղբյուր) տեղադիրքի և այլ բացահայտումների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն |
| IV. Հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ հետախուզական գործունեության բնագավառի տեղեկությունները | | |
| 29. | Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը կամ փաստացի վիճակը բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 30. | Գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունենալու, օտարերկրյա տեխնիկական հետախուզությունների և տեխնիկական միջոցների արտահոսքի դեպքերում տեղեկատվության պաշտպանությանն ուղղված ծրագրավորվող և անցկացվող միջոցառումները բացահայտող տեղեկությունները | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 31. | Նախագահական, կառավարական կամ այլ ձևի հատուկ կապի կառուցվածքին, տարրերին, ծավալմանը, շահագործմանը, պետական ծածկագրերին, դրանց վերլուծման մեթոդներին կամ միջոցներին, ծածկագրման միջոցներին, գաղտնագրման համակարգերին վերաբերող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |
| 32. | Հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ հետախուզական գործունեության ուժերը, միջոցները, մեթոդները, ծրագրերը, վիճակը կամ արդյունքները բացահայտող տեղե-կությունները, ինչպես նաև այդ գործունեությունները ֆինան-սավորելու մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները<br>Հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած, աջակցություն ցուցաբերող անձանց վերաբերյալ տեղեկությունները<br>Հայաստանի Հանրապետության հետախուզական, հակահետա-խուզական մարմինների կադրային կազմին կոնկրետ անձանց պատկանելությունը բացահայտող տեղեկությունները<br>Օպերատիվ զորահավաքային աշխատանքների վիճակը, արդյունքները, ինչպես նաև միջոցառումները բացահայտող տեղեկությունները | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ